# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2012թվականի N 8-Ն

## ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԳՈՏԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիսի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու նպատակով բաժանել 5 գոտիների և սահմանել աճուրդ-վաճառքի մեկնարկային գները ըստ գոտիների.

1) 1-ին գոտում ընդգրկել՝

ա/ Երևանյան փողոցին հարող տարածքները՝ <<Խաղաղության>> հարապարակից մինչև Կոմիտասի փողոց.

բ/ավտոկայանի տարածքը և եկեղեցու շրջակայքը,

գ/ Չարենցի փողոցին հարող տարածքները՝ <<Խաղաղության>> հարապարակից մինչև Հ. Անդրեասյան փողոց.

դ/ Հ. Անդրեասյան փողոցին հարող տարածքները.

ե/ Ռոմանի փողոցին հարող տարածքները.

զ/Երիտասարդության փողոցին հարող տարածքները.

է/ Հ. Արզոյան փողոցին հարող տարածքները՝ Հ. Անդրեասյան փողոցից մինչև Իսակով փողոց.

ը/ Անդրանիկի փողոցինհարող տարածքները Երիտասարդության փողոցից մինչև Իսակով փողոցը.

թ/ բազմաբնակարան բնակելի բնակելի շենքերի բակերը և նախկին կինոյի շենքի հրապարակը.

ժ/ Ազգալդյան փողոցին հարող տարածքները.

ժա/ Վ. Համբարձումյան փողոցին հարող տարածքները՝ <<Խաղաղության >>հրապարակից մինչև Ազգալդյան փողոց

ժբ/1-ին գոտու հողամասերի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել մեկ քմ-ի համար 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ:

2) 2-րդ գոտում ընդգրկել՝

ա/Չարենցի փողոցին հարող տարածքները՝ Հ. Անդրեասյան փողոցից մինչև Մաշտոցի փողոցը.

բ/ գ/Վ. Սարգսյան փողոցին հարող տարածքները.

դ/ Լեռնագործների փողոցին հարող տարածքները Վ. Սարգսյան փողոցից մինչև Խ. Ստեփանյան փողոցը.

ե/ Վ. Համբարձումյան փողոցը՝ սկսած Ազգալդյան փողոցից.

զ/ Շահումյան փողոցին հարող տարածքները.

է/ Վ. Մամիկոնյան փողոցին հարող տարածքները.

ը/ գործարանային փողոցին հարող տարածքները.

թ/Երևանյան փողոցին հարող տարածքները՝ Կոմիտասի փողոցից մինչև Բաղրամյան փողոց

ժ/ 2-րդ գոտու հողամասերի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել մեկ քմ-ի համար 700 (յոթ հարյուր) ՀՀ դրամ:

3) 3-րդ գոտում ընդգրկել՝

ա/ Բանավանի տարածքը,

բ/Լեռնագործների փողոցին հարող տարածքը՝ Խ. Ստեփանյան փողոցից դեպի Սոթք.

գ/Արզոյան փողոցին հարող տարածքները՝ Իսակովի փողոցից դեպի արևելք.

դ/Անդրանիկի փողոցին հարող տարածքները՝ Իսակովի փողոցից մինչև Գայի փողոց.

ե/3-րդ գոտու հողամասերի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել մեկ քմ-ի համար 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4) 4-րդ գոտում ընդգրկել՝

ա/Գայի փողոցից դեպի արևելք հարող տարածքները.

բ/ Մարշալ Բաղրամյան փողոցին հարող տարածքները.

գ/4-րդ գոտու հողամասերի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել մեկ քմ-ի համար 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ:

5) 5-րդ գոտում ընդգրկել՝

ա/Նախկին երկաթ բետոնյա կոնստրուկցիաների գործարանի տարածքները և չնշված տարածքները.

բ/5-րդ գոտու հողամասերի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել մեկ քմ-ի համար 350 (երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
5. ՃՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2012թվականի N 9-Ա

## ՄԱՐՏԻ 8-Ի ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, համայնքի ավագանին որոշում է՝

1.Մարտի 8-ի կանանց տոնի առթիվ Վարդենիսի քաղաքային համայնքում գործող կրթական, մշակութային, առողջապահական և քաղաքային համայնքի ենթակայության հիմնարկներում միջոցառումներ կազմակերպելու, կանանց և աղջիկներին նվիրատվության նպատակով Վարդենիսի քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեից հատկացնել 1750000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

1) 1100 (մեկ հազար հարյուր) նվերների ձեռք բերման համար՝ պահուստային ֆոնդից հատկացնել 1650000 (մեկ միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2)Միջոցառումների կազմակերպման համար՝ համապատասխան հոդվածից հատկացնել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
5. ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ

6. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2012թվականի N 10-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2-ՐԴ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետով և հաշվի առնելով ներկայացված նախահաշվային փաստաթղթերը, Վարդենիսի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

<<Վարդենիս քաղաքի թիվ 2-րդ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի վերակառուցման համար Վարդենիսի քաղաքային համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրել 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
5. ՇՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2012թվականի N 11-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 1.0687ՀԱ 0238-0049 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԼՈՏԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիսի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Անդրանիկի փողոցի 3-րդ նրբանցքի 1.0687 հա 0238-0043 ծածկագրով հողամասը բաժանել երեք լոտերի և օտարել աճուրդ վաճառքով՝

1-ին լոտ 0.298հա, 2-րդ լոտ 0.4856հա, 3-րդ լոտ 0.2851հա, որպես արտադրական գոտի:

2.Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանել մեկ քմ-ի համար 350դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
5. ՇՀՈՅԱՆ ՋԱՎԵՆ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269) 2 2031 vardenismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2012թվականի N 12-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2-ՐԴ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ը ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիս քաղաքի թիվ 2-րդ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի կանոնադրության 5.2 կետը՝ համայնքի ավագանին որոշում է.

2012թվականի մարտի 5-ից վերաբացել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Վարդենիս քաղաքի թիվ 2-րդ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ
5. ՇՀՈՅԱՆ ԶԱՎԵՆ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՏՈՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱԼՈԴՅԱ ԽԼՈՅԱՆ**